

ԱՊԱՌԻԿ ԱՌԵՎՏՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Վարկի նպատակ	Ծառայությունների և/կամ սպառողական ապրանքների ձեռքբերում
Վարկառուի նկարագիր	21-65 տարեկան ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ
Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Վարկի գումար	30,000- 4,000,000 ՀՀ դրամ
Վարկի ժամկետ	3 - 72 ամիս
Վարկի ամսական սպասարկման վճար¹	Վարկի սկզբնական գումարի 0-1.5%-ի չափով
Տարեկան անվանական տոկոսադրույք	0-24%
Կանխավճար	0-70%
Ապահովվածություն	Ձեռք բերվող ապրանք
Վարկ/գրավի արժեք հարաբերակցության առավելագույն ցուցանիշ	100%
Ապահովագրություն	Չի պահանջվում
Տրամադրման եղանակ	անկանխիկ
Մարման եղանակ	<ul style="list-style-type: none"> • Անուիտետային (մայր գումարի, տոկոսագումարների և հաշվի սպասարկման վճարի ամսական հավասարաչափ վճարումներ) • Անհատական մարման գրաֆիկ, որը ներառում է մայր գումարը, տոկոսագումարները և հաշվի սպասարկման վճարները
Վաղաժամկետ մարում	Վարկը ցանկացած ժամանակ կարող է վաղաժամկետ մարվել, որի դեպքում տույժեր և այլ վճարներ չեն գանձվում:
Ժամկետանց պարտավորությունների մարում	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ ¹ չմարված գումարի 0.13 ² %-ի չափով

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

¹ Տարեկան անվանական տոկոսադրույքի և վարկի ամսական սպասարկման վճարի չափը որոշվում են համաձայն Բանկի և համապատասխան ընկերության համագործակցության պայմանների:

² Նշված տոկոսադրույքը ենթակա է փոփոխման ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխման դեպքում:

Դիմելու պահին նախորդող առնվազն 3 ամիս անընդմեջ Բանկում ոչ պակաս քան 100,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթի չափով ավանդ ունեցող հաճախորդների համար սույն սակագների շրջանակներում սահմանվում է՝

- անվանական տոկոսադրույքի զեղչ 2 տոկոսային կետի չափով, (բայց ոչ պակաս, քան 13,5%-ը),
- հաշվի սպասարկման ամսական վճարի զեղչ՝ 50%-ի չափով:

Ծանոթություն՝

1. Բանկն իրավասու է հաճախորդի հետ պայմանագիր կնքել սույն փաստաթղթով սահմանված սակագներից և պայմաններից տարբերվող այլ սակագներով և պայմաններով:
2. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԲԱՆԿԸ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐԿԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/05-Ի, ՈՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ԵՆ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:
3. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված վարկի հիմնական գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:
4. Հաշվին մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկի պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ միջնորդավճարների, տույժերի, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի սույն կետով սահմանված մարումն իրականացնել այլ հաջորդականությամբ:
5. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՅՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԻՆԵԿՈԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ (www.inecobank.am) «ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ԷՋՈՒՄ:
6. Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ՝ ելնելով 360 օրվա հաշվարկից:
7. **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝** ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ

ՁեՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

8. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ԱՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:
9. Բանկը սպասարկում է միայն այն ապառիկ վաճառքները, որոնք կատարվել են Բանկի հետ համագործակցության պայմանագիր կնքած ընկերությունների կողմից, որոնց ցանկը ներկայացված է Ինտերբանկ ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am:
10. Վարկի տրամադրման համար անհրաժեշտ է ներկայացնել.
 - անձը հաստատող փաստաթուղթ,
 - հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ),
 - եկամուտները հիմնավորող փաստաթուղթ, այդ թվում աշխատավայրից տեղեկանք (ըստ պահանջի):
11. Վարկի տրամադրման դրական որոշման գործոններն են՝
 - կայուն եկամտի աղբյուր,
 - դրական կամ չեզոք վարկային պատմություն,
 - արժանահավատ և լիարժեք փաստաթղթեր:
12. Վարկը մերժելու գործոններն են՝
 - վարկը մարելու համար անբավարար եկամուտներ,
 - հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում,
 - բացասական վարկային պատմություն,
 - հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ:
13. Վարկի տրամադրման ժամկետ՝ վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացումից հետո մինչև 5-15 րոպե:
14. Վարկերը ձևակերպվում են Բանկի հետ համագործակցող ընկերության վաճառքի/սպասարկման կետում և Բանկի մասնաճյուղերում:
15. Փաստացի տոկոսադրույքի հաշվարկի օրինակ՝

Վարկի գումար՝ 300,000 ՀՀ դրամ,
Ժամկետ՝ 24 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 20%,
Ամսական վճար՝ վարկի գումարի 0%,
Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 21.99%:
16. «Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ (նման պահանջի առկայության դեպքում):

17. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:
18. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն: